

որոյ ,՝ կամ “ուստի” ,՝ որով յայտ առնէ թէ բազկատարած ազօթել սրբոյն տիրապէս վասն բղխման ջրոյն էր, որ է գործ գլխաւոր և յիշաստակ յաւերժական սրբութեան երանելոյս Ինյց լոելեայն և զառաջինն ևս ցուցանէ, և ապա հետեւաբար ասէ, “աղքիւր բժշկութեան,, . ոչ անյայտ է բանս, և ոչ ընդ գրուանաւ ծածկեալ, այլ իրբև աշտանակ ի Հայաստան աշխարհի ակներեւ փայլի զանազան ախտից լուալ բժշկութիւն ի ջրոյն յայնմանէ՝ հաւատով և ջերմեռանդ հոգւով խնդրողաց, վասն որոյ և ոչ է պատշաճ ըստ յայտնի իրաց երկարաբանել յումպէտա ի ձանձրութիւն ընթերցողաց, և միայն համառօտակի տեսցուք զայսցանէ, զի ասաց “բղխեալ,, . որով յայտ առնէ զինքնաբու զի լինել ջրոյն այնմիկ, և ոչ անձրե ային ջրոց, կամ ծովու ընդ երակս երկրի անցելոց, այլ որպէս հարկանէր Ոռվակս զվէմն՝ և վտակք իտաղյին ի նմանէ յարբումն Արէական ժողովը դեան, ըստ այնմ ի պատիւ երեսաց երանելոյս ջուր ինքնաբուղի շնորհեաց Աստուած և անցամաքելի պահեաց յիշատակ յարաձգական յորդուոց յորդիս, ի փառս իւր և ի պարծանս Հայկազեան տոհմիս, և զի սահ Վեծն Հայաստան աշխարհի եղե, ըստ որում Ուասիս ի Վեծն Հայաստան անկանի, և այն ի սէր ազգիս մերոյ, վասն որոյ ցնծութեամբ երգէ յասելն “ի Հայաստան աշխարհի” . աշխարհ բոլոր բաղկացելոյն ի յերկնէ և յերկրէ ասի, այլ աստ բոլորն ի տեղի մասին առեալ դնէ. զի Հայաստան քաղաք մասն ինչ է Ասիոյ, և Ասիայն՝ չորրորդ կիսագնուոյս. ուստի փոխանակ ա-

սելոյ “Հայաստան քաղաքի,, . ասաց “աշխարհի,, . ապա զմեծութիւն սրբութեան և զառաւելութիւն մաքրակրօնութեան սրբոյ հայրապետիս, զյաւերժական յիշման արժանին, յառաջ բերեալ ներբողախառն բանիւ երգէ ասելով,

(Սահմանական է յետուայու)

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՃՆՈՒԹԻՒՆՔ ՃԱՅՐԵՆԵԾՑ.

(Նորագույն Ակադեմիա)

ԵՐՆՅԱԼԻԱՆԵՐԵՐԴ.

Երնջակ գետոյ ձախ թեկի վերայ, և Կորաչէն գիւղէն երկու վերատ հեռի կը բարձրանայ միապաղաղ սեան նման ուղղակի վեր: Ա. Վ. Չամեան կդնէ այս լեառն ընդ մէջ Երնջակ և Գողթն գաւառաց, բայց միանգամայն սխալ. ըստ որում բռն համանուն գաւառի մջն է, և Գողթն գաւառէն բաւական հեռի: Եյս ամբոցիս զլիսին անցած գանաղէտ և քըստ միելի անցից յիշատակը մարդ կզարհուրեցնէ: Աս ինքն վաղ ժամանակէ հետէ ապաստանաբան պիտի եղած լինի մեր ազգայնոց, թէ և պատմութեան մէջ առաջին անգամ նշանաւոր կհանդիսանայ Յուսուլի բռնաւորի պաշարմամբը, և Ամբատայ Խոստովանող Երքայի՝ սորա ստորոտը կրած կատամահ տանջանօքը, յամի 914: Եյդ արիւնաբրու անդութ բռնաւորն շըզ թայտապ կաշկանդած Հոյոց թշուառ և ողորմելի թագաւորը, և հետն առած կդի-

մէ այս բերդիս վերայ՝ “Եւ մտի եղեալ խլել և յատակել զամրոցն, և զբնակիչն նորին վարել ի գերութիւն, մանաւանդ զորինայս մեծամեծաց, յարս երևելի էին մայրն Ամբատայ Ախսակեանց, և կին նորա որ էր քոյր Գագկայ բռնաւորի, և կին Աահակայ եղբօր նորին Ամբատայ, և այլ ևս ազատ կանայք, թող զբազում որդիս նախարարաց որք զօղեալ մնային անդ,, Զամ. պատմ. հատ. Բ. գիրք Գ. եր. 756. բայց երբ որ կտեսնէ մարդախոշոշ բռնաւորն, որ ամրոցն անձնատուր չի լինի, սըրտին չարաթժոյն դառնութեան մաղձը կը թափէ Ամբատ արքայի վերայ, կանգնեցընել տալով զնա բերդի մէջ դտնուածների աշքի առաջը, ու չարաչար զանահարութենէն և ազգի ազգի անլուր սոսկալի և անտանելի տանջանքներէն յետոյ, խեղդել հրամայելով հրապարակին մէջ, դահիճք հրամանն առած, թաշկինակը բռնի վարոցներէն բերանը մղելէն, տասներկու մարդոց վրան ընկնելէն ու հոլովելէն յետոյ, չքստմնեցան ի բերելն արտաքոյ բնութեան ի սարսափելի տանջանս. զի յերկարեալ տակաւին շնչոյ նորա՝ մատուցին ի ծածուկ անդամն նորա կտանս և չարչանս անողորմս և քստմնելիս, անհնարինս և անսանելիս: Եւ ապա մինչ չե էր իսպառ հատեալ շնչոյ նորա, խողխողին զնա, և հատին սրով զղուխ նորա,, (ի նոյն Պատմ.):

Անօրէն ոստիկանն Ամբատայ կեանքը զբաւելէն յետոյ որչափ և բերդի պաշարումն ու պատերազմն կսասակացնէ, առումն անհնարին կլինի, մինչև որ ամենահաս և արագահաս նենդութեան ու մատնութեան մեքենաները թշնամին յանկարծ

մերկազէն ի ներքս լցնել կտան, յահարեկ շուարումն և ի սուգ անհնարին դառնութեան տարարազդդ բնակչացն. որոց “Հատընափիր արարեալ զմնացորդս մարդկան, զանպիտանսն և զտգեղսն սրոյ ետուն ծարակ, իսկ զառոյգսն և զգեղեցիկան գերեցին: Ոյնակէս և զկանայս մեծատանց հանդերձ մանկամբք նոցին,, (անդ. եր. 758): Հայ ուղևոր, Հայ եղբայր, ո՛հ որչափ հասած կինէի բաղձանացս, թէ որ այս աշխատութիւնովն տեղեք տուած լինէի քեզ գիտել, թէ այդ հողն՝ ուստի դու այժմ գտակիդ ծուռ դրած կիոխսես կանցնես, քո անբրազդ թագաւորի, իշխանաց, և համարիւն հազարաւոր եղբարց արիւնով ոռոգուած է. այդ լեառն՝ որի տակովն այդպէս երգով և դնդնալով կանցնիս, բիւրաւոր սրտաբեկ, անյոյս, և անօգնական ընտանեաց, տիկնայց, և իշխանաց մերթապաստանարանէ եղած, մերթ տիրանենգ մատնութեան և նախանձու ձեռքով զոհարան, գոնէ, այդ տեղէն անցած միջոցդ, վրէժինդիր սիրութող անգամ մի շարժէ երակներիդ մէջի արիւնը, և եթէ դու օգնել չկարացիր, գոնէ կարեկցութեամբ ևս պատուէ նոցա արտասուելի յիշատակը:

Աշրկոտասաներբորդ դարու մէջ կժառանգէ այս ամրոցն քանի մի աւանօք համանուն գաւառի՝ Աշիկում Ուռպելեան, եղբայր Իւանայ. յետ նորա Ամբատ քաջազօր իշխանն Ախւնեաց: Եյս ամրոցիս ստորոտները տեսնուած պատնէշի և պարապի նշմարելի հաստապինդ հիմունքը, յամանակի անկասկած ամրութիւնը կը հասկացնեն. և հարիւրաւոր գերեզմանները, որք ամրոցիս ստորոտը, դէպի ի Ծահ-

կերտ տանող ճանապարհի ճախ թեկի վերայ կարկառի մի գլխին կանկանին, և որոց ամեն մէկը կապարունակէ իւր մէջ մինչև 40-50 մարմիններ, տեսնողին կարծել կտան այս տեղ թափած հազարաւոր մարդոց արիւնը և կոտորածը. ո՞ կարող է երկուանալ թէ այս գետնափոր փոսերի մէջ կուտակուած զիակները այն զօրացն կլինին, որք ժամանակաւ ամրոցիս դէմ մարտ դըրած և ջարդուած, կամ երկարաձիգ պաշարման միջոցն դիւրածախ ախտով մի բռնուած, առ տեղեաւն հողը մտած են: Եյս դերեզմանների հիւսիսակոզմն, փոքր ինչ հեռի, բաւական ընդարձակ բլբակի մի վերայ կան դարձեալ պարսպի կամ պատնէշի աւերակներ, որոց համար “Երաշինեցի ուղեցոյցն իմ ասաց որ ‘‘բերդը փակողների օրտուատեղն ա՝ ինչպէս որ մեղանում պատենական խօսք ա ասում են,,,:“

Ա երջին ժամանակներն այս տեղ ապաստանած էին և Պարսիկ զօրքը. յետ նոցա և Ոսուսաց սակաւաթիւ բանակը, մինչև որ բոլոր երկիրն իրանց ձեռքն առին: Երեք անգամէ որ ես այս ամրոցի դլուխը բարձրացայ տաժանելի նեղութեամբ, և երեք անդամն ես զարմանքս զսպել չկարացի, տեսնելով բարձր և ապառաժ լերան մի գլխին այնքան հոյակապ և բաղմաթիւ արհեստահնար շէնքերը: Երկու Ճանապարհիայ միայն բերդն ելանելու, մինն հարաւային և միւսն հիւսիսային. հիւսիսային Ճանապարհն յառաջ այնպէս պատրաստուած է եղել, որ մէկ ձիով կարելի է եղած գնալ. իսկ այժմ շինուածոց փլատակաց և լերան գլխէն թափած սալերովն փակուած. այսուամենայնիւ ոտքով գնացողին համար միւսէն դիւրին. այս Ճա-

նապարհով բարձրացած ժամանակը, կտես նես երեք ամրապինդ պարիսպներ քարու կիր շինութեամբ, առաջնապարիսպն ըստ կիսոյն քանդուած է, միայն պահակների տեղերն աւելի գիմացել են. միջնապարիսպըն առաջնոյն չափ վնասուած չէ. իսկ ներքնապարիսպն զեռ կանդուն մնացած ամուր և բարձր շէնք մի է. այս պարսպի քովեր կան սենեակներ, որը քարուեկիր, և որը թրծած աղիւսով կանգնած շինութիւնք, մեծաւ մասամբ անվնասք, իսկ պարիսպն անցած ժամանակդ, կտեսնես հարիւրաւոր մեծ և փոքր սենեակներ, է որ քարուեկրով, և է որ աղիւսով շինուած, բոլորն ալ ամուր և ընտիր, որոց կպակասի միայն ծածկը. լերան արեւմտեան հարաւային ծայրի վերայ դեռ մինչև այսօր կայ և մնայ ամրող ջ քարաշէն դիտարան մի: Ոչ սակաւ ուշադրութեան արժանի են և նորա ջրամբարներն՝ որք թուով ինն հատ են, ամեն մէկը վեց քայլ լայնութեամբ՝ քոան չորս քայլ երկայնութեամբ և վեց կանգուն խորութեամբ: Եյս ջրամբարներն լեռ քարէ կտրուած, տաշուած և քառակուսի ձևով փոսացրած աւազններ են, մանր մանր ձիւղերով փորուած առուակներովն բոլոր անձրեները և հալուած ձները կժողովուին անկորուստ: Վմրոցի խիստ վտանգաւոր պաշարման ժամանակ նոցա ջրամբարները զովացրել են պաշարելոց պասուքը. նոյն իսկ ամառուսան տօթե եղանակին ամեն մէկի մէջ ևս ջուր գտինք, բայց մեռած՝ ինչպէս են սովորաբար անշարժ ճահիճների ջրերը. երկի գործ ածած ժամանակը աւազով կամ ուրիշ հնարքով մաքրել ու կենդանացը ըել են:

Լերան գագաթը երկու ձիւղ բաժանուած է. այցելուն մի ձիւղի տարածութիւնը և վրայի շենքերը զիտելէն յետոյ կպարտաւորի ե. միւս գագաթը եւլանել ահ ու ոռղով, որ առաջինէն շատ բարձր է, այս ձիւղի վերայ գտնուած աղիւսակերտ և ըստ մեծի մասին կանգուն շենքերը տեսնողը, առաջինի վերայ ունեցած զարմանքը կզապէ. դէպ ի հիւսիս և արևմուտք մտիկ տուող լերան մերկ և միապաղաղ գագաթին վերայ կանգնած հոյակապ կամարները, ընդարձակ քառակուսի դաշլիճը, և չորս կողմի վայելու չարտարարուեստ շենքերը արդէն ցոյց կտան իշխանական արքունիք լինելը, որով և իրաւամբ մերձակայ բնակիչք Շահ—Խախտը, կանուաննեն: Ե՞նչ սքանչելի և դիւթիւ տեսարան կընծայեն այս տեղէն մրտիկ տուողին, Երնջակ գաւառը, Մասիսը, Երասիսը, Կախիջևան քաղաքը, և Պարսկաստանի լեռները: Հարաւային ճանապարհն ընայելով որ արդէն դժուարակուս և տարժանեցու ցիչ է, դարձեալ երեք պարսպով ամրացած է. սորանելքնարերդը, որ լերան գլխին է, այնպէս ամուր և անվտանգ է, որ կարծես նոր շինուած է. յաջմէ և յաշեկէ կան երկու ընտիր և գեղեցիկ սենեակներ նոյնպէս անվնասք: Այս ճանապարհն կտանէ զմարդ դէպ ի Երնջակ դետը, որ մօսովն կանցանի. վերջին ու աւեր պարսպէն դուրս եկած ժամանակը լերան ստորոտի վերայ բաղմաթիւ շինութիւնների — տանց և պարսպաց մնացորդներ կտեսնէ մարդ, բոլորն ևս քարաշէն, բայց դժուար է որոշել թէ ինչ նպատակի են ծառայած:

Խանաղաւ.

Երնջակարերդի այս հարաւային ըստութիւնի վերայ այժմ կայ տաճկաբնակ գիւղ մի Խան—աղա,, անուն. որ կերեկի հիմնեալ վերջին ժամանակներս. որովհետեւ բերդի այնքան անդադար պաշարմանց ժամանակ էք կարող այս տեղ բնակութիւն լնել: Խանակիչք գեղջս ծոյլ և աղքատ մահմետականք են 50 տան չափ. նոր նոր սկսած են ծառաստաններ և պարտէղներ մշակելու ձեռք տալ:

Երնջակ ժաղաւ.

Յիշատակեալ բերդի հարաւակողմն և անտի իրը չորս վերստ հեռաւորութեամբ կան և մնան գեռ հաղեւ նշմարելի աւերակք քաղաքիս, որոյ անունով և ամբողջ գաւառը կոչուած է. տարածութիւնն քաղաքիս ձգուած է կէս մի հարթ լեռնադաշտակի, և կէս մի լեռների վերայ, բայց ափսոն, որ կոյր՝ տգէտ, և հնութեան յարգը չիմացող թառւրք բնակիչք Խանաղաւ գիւղի, վերջին ժամանակներս սակաւ առ սակաւ քանդելով աւերակներն ազարակներ դարձուցած են, այնպէս որ այժմ հաղեւ կան և կնշմարուին ցան և ցիր մնացորդք հիմանց, ըստ կիսոյն քարուկիր և ըստ կիսոյն հողանիւթ շինութեանց: Վուաջեաւ քաղաքատեղւոյն՝ լեռնադաշտակի վերայ կանկանի գերեզմանատունն, որ այնքան բաղմաթիւ հին գերեզմաններովն քաղաքին երբեմն բաղմանարդութիւնն կը յայտնէ. հնութեան ժանիքն ծախել է գերեզմանաց բոլոր արձանագրութիւնները, պահելով միայն ինշան քրիստոնէութեան մամռապատ խաչերը. այնքան երկար դերելու քարերի մէջ հաղեւ միայն մէկի

վերայ այս գրերս որոշել կարացի ։ Թվին
Ութին, : Որչոփի շատ կերեին հանգստա-
րանիւ գերեզմաններն, գեռ երկու բաժնի
չփի հերկուած հողի մէջ անյայտացած
են, յիշտափեալ գիւղի մոլեռանդ բնակ-
չաց չարտմիտ մախանօք։ Այս քաղաքիս
մէջ եղեւ ազգային ժողովն այսց, Բա-
գարատ մեծ իշխանի, և Ամբատայ Բագ-
րատունւոյ մեծ սպարապետի օրով յամի
841, Ովայեցի Յովհաննէս Կաթողիկոսի
վերայ եղած ամբաստանով թիւններն քըն-
նելու համար։

Ա. ԳԵՂԻՔ.

Երնջակ քաղաքի հիւսիսակողմն, բար-
ձըր և դժուարամատչելի լերան մի զլիին
կանկանի այս վանքը յանուն Ա. Գէորգայ,
շինութիւնն հասարակ, քարուկիր. կան-
գուն կման միայն որմունքն. ունի սեղան
մի, և դուռն երկուս. չունէր բնաւ արձա-
նագիր. կից աւագ մատրանս ի հիւսիսոյ
եղած է միւս ևս աղօթատեղի փոքրիկ,
այժմ և նա աւեր բոլորովին բաց ի արեւ-
լեան որմոյ կէսն։

Եռաջեաւ մատրանն դէոլ յարեմուտս,
լերան զառիվայր կուրծքի վերայ կտարա-
ծուի ընդարձակ գերեզմանատունն, որոյ
շերմաց դեռ շատը հերկուած հողի մէջ
ծածկուած անյայտացած հերկող արօրի ե-
րեսէն. մնացելոց մէջը կտեսնուին քանի մի
փառաւոր մահարձաններ, այլ զրութիւն-
ներն եղծուած։ Մատրան քովերը գիւղի
կամ բնակութեանց հետք չգտնելով հար-
կաւ կկարծուի որ և այս հանգստարանը
Երնջակ քաղաքինն պիտի լինի դարձեալ,
ուր ամիոփուած են շատերը առանձ/ն կը-
տակով և բաղձանքով մի, աւպաթէ ու փոք-

րիկ մատրան մի սակաւաթիւ ծառայողնե-
րովն չեր ձեւանայ բազմամարդ հանգստա-
րան, արդիւնաւոր այրին, Յովհաննէս Խ-
պիսկոպոս Շահիսաթունեանց այս տաճա-
րիս կամ մատրանո համար կկարծէ լինել
առաջին մենաստան Ա. Կարապետի Երն-
ջակու, զոր մեք չընդունեցինք վերելը։ Ա.
Գէորգայ մատրան հիւսիսակողմն հարիւր
քսան քայլ հեռի, սրածայր ժայռին տակ
փոքրիկ քարապատ խրձթիկ մի կար, որոյ
մէջ գերեզման մի՝ վրայի քարը մէջ տեղէն
բեկեալ, ունէր զանազան նկարներ և փո-
րուածք. իսկ եղեցքի մէկի վրայ այս գրերը
“ԵՊ. Խ. Թ., գուցէ միւսքն եղծեալք.
աւանդութիւն մերձակայ բնակչաց “Ճ՛Ծ-
նաւորի,, կկոչէ այս շերիմու։ Խնչպէս յիշա-
տակեալ մատուռն Ա. Գէորգայ, նոյնպէս
և այս գամբարան ուխտատեղիք են մօ-
տակայ ձայ գիւղօրէից։

Դ. ԱՊԱՆՃԻ (Շահնշահու)։

Երնջակ գետի ձախակողմն բարձրաւան-
դակի մի վրայ տարածուած բաւական ըն-
դարձակ գիւղ մի է. գեղեցիկ տեսարան
կընծայեն այս գիւղին՝ զինքն շրջապատող
լեռներն և բլուրներն, որոց մէջ կան՝ որ
մերկեն, և կան՝ որ բուսաբեր, կան՝ որ մեծ,
և կան՝ որ փոքր։ Դ. աղանճին շրջապա-
տող լերանց մէջ նշանաւորներն են յա-
րեմուից Երնջակաբերդ, ի հարաւոյ Պալ-
լը—Դ. այս,, (Յեղածծոր վէմ), և կը-
կոչուի այս անունով նորա համար՝ որ ան-
մատչելի գագաթին մեղուք բուն դրած են.
ի հիւսիսոյ՝ անտոիկ ամրոցն Պաղանչոյ,
որ շատ անգամ ապաստանարան է եղած
ողօրմելի ժողովրդեան Պարսիկ ասպատա-
կողների երեսէն, և հանդիսարան սըխրա-

գործութեան՝ կորովի բազկաց Խանդամի-
րեան Յօվհաննէս իշխանի և արքասիրա-
լնկերաց նորին, որոց համար Զամշեանն
կզբէ Աէին արք զօրաւորք և հաստաբա-
զուկք, : Այս աւանն ի հնութեան շատ մեծ
և բարգաւաճ եղած է, և շատ անդամ
պատմութեան մէջ քաղաք կկոչուի: Այժ-
մու բնակիչք գիւղիս բոլորն ալ չայք են
հարիւր տան չափ, որոց կէսն բնիկ, և կէ-
սըն գաղթական. բնիկ բնակչաց մէջ գրե-
թէ գեռ կփայլի նախնեաց անվեհիր և քա-
ջակորով արիութիւնը, անուանի են ձիա-
վարժութեան և զինակրութեան մէջ, և
սկնածերի շրջակայ բնակչաց մօտ :

Այս գիւղի բուն անունն է՝ Շահկերտ,
որ ցոյց կտայ լինել Շահի գործ կամ դաս-
տակերտ, բայց հնութիւնն ցոյց տուած չէ
սորա սկզբնաւորութիւնն. անունն է՝ Շահ-
կերտ,, տեղական աւանդութիւնն կմեխնէ
“Շահ-գիրդ,, (Շահեմուտ) ինչպէս պի-
տի տեմնեմք ստորեւ։ Այժմու սովորական
կոչումն ապանչի,, առնուածէ ի կիրա-
ռութիւն դրացի բնակչաց մէջ՝ գիւղիսնախ-
նի բնակչաց արհեստէն, այս ինքն պղնձագոր-
ծութենէն, որ ժամանակին գլխաւոր և
կիրթ պարապմունքն էր Շահկերտցւոց մե-
ծագոյն մասին։ Այս տեղ՝ ինչպէս կերեխ՝
ամենեին մուտ գործել չէ կարացած լս-
տինահայ ունիթուաց ճարտարահնար խո-
րամանկութիւնն, մինչդեռ մօտակայ գիւ-
ղորայքը շատերը գլխովին որսացուել են։
Շահկերտի նշանաւոր բազմամարդու-
թեան և ծաղկեալ դրութեան վկայք են,
մինչև ցայսօր դեռ նշմարելի աւերակներն
ջրանդիդ, այգեաց, ջրաղացից և այլն։

Պատմեցին զիւղիս ծերունի բնակիչքը,
թէ աւախնեաց մեր զիւղումն քառասուն

Երկու ջաղաց ա էլել, ու հաղար հինդ հար-
իւր տուն բազմութիւնն,՝ Պարսից հարս-
տահարութիւններէն և անդադար ասպա-
տակութեանց անթիւ հարուածներէն
ստիպուած այդքան բազմութիւնը գաղ-
թել ու փոխուել են զանազան տեղեր,
ուր տեղ ապահով ասլրելու յոյս ունե-
ցած են. այժմ Ըուշի քաղաքին մէջ ա-
ռանձին թաղ և առանձին եկեղեցի կայ
ու ազանչեցւոց, կոչուած, որոց մէջ կան
դեռ մինչեւ ցայսօր Խանդամիրեան մեծա-
նուն տոհմի շառաւիղները: Գլխաւոր
պարսպմունք այժմու բնակչաց գիւղիս են
երկրադործութիւնն, այդեզործութիւնն,
խաշնարածութիւնն, մեղուարուծութիւ-
նըն, և շերամատածութիւնն. արհեստնե-
րըն են գարբնութիւն, հիւնութիւն, ոս-
տայնանկութիւն, և սափրութիւն. երկրա-
գործութիւնն ծաղկած է փոքր իշատէ, իսկ
այգեզործութիւնն՝ գաղթականաց մէջ:
Բնիկ ժողովրդականաց լեզուն՝ Կախիջե-
ւանի գաւառական բարբառն է, միայն
շատ բառերի մէջ կլսուին Ոիւնեցի հընչ-
մունք, և այն մօտ դրացի լինելուն պատ-
ճառաւ է երեկի:

(ੴ ਸਤਿਗੁਰ ਪ੍ਰਸਾਦਿ)

ԶԱՐԵԿԱՆ ԱՆԱԳՈՏ ԿՈՄ ՄԵՆԱՀԱՅ,

Պատահ եմ ի հայրենասիրութիւն
Խմբագրութեան Վըարատայ, թէ սիրով
ընկալաւ ի ծոց սորա զստորագրութիւն
վաղեմնի և զերկանց վէպս մերոց նախ-
նեաց որք անմահացուցին զանուանս իւր-
եանց զանազան ազգի ազգի մեծագոր-
ծութեամբ, զի զիտեմ հայրէնանուելը